Funded by the European Union

Արևելյան գործընկերության երկրներում բնական և մարդածին աղետների կանխարգելում, պատրաստվածություն և արձագանք – PPRD East 4



Իրականացման ժամանակահատված: 01.11.2025 - 31.10.2029

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 4 998 889

Ընդհանուր բյուջե: € 5 000 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

CIMA Research Foundation (Italy), Fire and Rescue Corps of the Ministry of Interior of the Slovak Republic (Slovakia), Italian Relief Corps of the Order of Malta (Italy)

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: facebook.com/pprdeast4/

Նախագծի նկարագրություն:

PPRD East 4 ծրագիրը հանդիսանում է ԵՄ առաջատար նախաձեռնության չորրորդ փուլը, որի նպատակն է աջակցել Արևելյան գործընկերության երկրներին աղետների ռիսկերի կառավարման (DRM) համակարգերի ամրապնդման և ԵՄ Քաղաքացիական պաշտպանության մեխանիզմի (UCPM) հետ համագործակցության զարգացման գործում:
Այս փուլը հիմնվում է PPRD East 3 ծրագրի շրջանակում ձեռք բերված կարևոր արդյունքների վրա և կենտրոնանում է իրականացվող միջոցառումների կրկնելիության, կայունության և ազգային պատասխանատվության ամրապնդման վրա: Միևնույն ժամանակ այն նպաստում է գործընկեր երկրների մոտեցմանը ԵՄ օրենսդրական և քաղաքական շրջանակին քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկերի կառավարման ոլորտներում՝ համապատասխան ԵՄ աղետների դիմակայունության նպատակներին և ԵՄ պատրաստվածության միության ռազմավարությանը:

Ակնկալվող արդյունքներ:

1. Փորձնական տարածքներում անցկացվող վարժանքների միջոցով փորձարկվում են արտակարգ իրավիճակների պատրաստվածության ծրագրերն ու գործողությունների միասնական ընթացակարգերը: Միևնույն ժամանակ զարգացվում են վաղ նախազգուշացման մեխանիզմները, ամրապնդվում է սահմանային համագործակցությունը, խթանվում է կամավորների ներգրավվածությունը և բարելավվում է տարբեր կառույցների միջև համագործակցությունը:
2. Փորձի փոխանակման հանդիպումներն ու աշխատաժողովները նպաստում են փոխադարձ ուսուցմանը և տարածաշրջանային համագործակցության խորացմանը: Դրանք նաև հնարավորություն են տալիս մասնակցելու մասնագիտական միջազգային հարթակներին, օրինակ՝ Քաղաքացիական պաշտպանության և հումանիտար ֆորումներին:
3. Ամրապնդվում է Արևելյան գործընկերության երկրների միջև տարածաշրջանային և սահմանային համագործակցությունը, ներառյալ սահմանային ռիսկերի համատեղ գնահատումն ու արձագանքը: Ծրագրի շրջանակում նաև կազմակերպվում է տարածաշրջանային լայնածավալ վարժանք՝ տարբեր երկրների կառույցների համատեղ մասնակցությամբ: